

ԲՆԱԳՐԵՐ

ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

TEXTS ET ETUDES

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿՈՒՆՈՒ ՏՈՄԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ

Յայտնի է, որ մաշտոցեան գրերի գիւտից քիչ անց՝ Ե. Դարի առաջին քառորդում հայերէն է թարգմանուում Անդրէաս Բիւզանդացու Տոմարը¹։ Սա վկայութիւնն է այն բացառիկ կարեւորութեան, որ ունեցել է տոմարը հայ իրականութեան մէջ՝ մեզ յայտնի ամենավաղ ժամանակներից սկսեալ։ Յայտնի է նաեւ, որ մինչեւ 552 թուականը Հայաստանեայց Եկեղեցին Ջատիկի եւ այլ տօների ժամանակը որոշելու համար կիրառել է հէնց Անդրէասի տոմարը, որ նախատեսուած էր ութ քրիստոնեայ ազգերի եկեղեցական տօները գտնելու համար²։ Նշուած թուականին աւարտուում է Անդրէասի տոմարում եղած զատկացուցակը, որ հաշուարկուած էր 200 տարիների համար՝ 353ից մինչեւ 552։ Սրա հետեւանքով քրիստոնեայ աշխարհում տոմարական խառնաշփոթ է առաջանում։ Այս մասին բաւական մանրամասն պատմում են միջնադարի հայ տոմարագէտները³։

Բան նայն է, որ Անդրէասի զատկացուցակը կազմուած է եղել Լուսնի 19ամեայ պարբերաշրջաններով⁴։ Այդ ժամանակներում 19ամեակներով էին կազմուում քրիստոնէական բոլոր տօնացոյցները։

1 ԱՂԱՅԵԱՆ, Է., *Անդրէաս Բիւզանդացու երկուհարիւրամեայ տօնացոյցը եւ նրա հայերէն թարգմանութիւնը*, Ի Բանբեր Երեւանի Համալսարանի, 1979, թիւ 2, 122-139։

2 ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ, *Տիեզերագիտութիւն եւ տոմար*, ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Ա. (աշխ.), Հայպետհրատ, Երեւան 1940, 86, 87։

3 ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ, *Համարողի մատենագրութիւն*, ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Ա. (աշխ.), Մատենադարանի հրտ., Երեւան ՌՁԽԳ, 295. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՍԷՐ, *Մատենագրութիւն*, ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Ա. (աշխ.), Երեւանի Համալսարանի հրտ., Երեւան 1956, 295. ՅԱԿՈԲ ՂՐԻՄԵՑԻ, *Տոմարագիտական աշխատութիւններ*, ԷՅՆԱԹԵԱՆ, Զ. (աշխ.), ՀՍՍՀԳԱ հրտ., Երեւան 1987, 130, եւ այլն։

4 Սա, այսպէս կոչուած՝ Մէթոնի պարբերաշրջանն է։ 19 տարի պարբերութեամբ կրկնուում է Լուսնի փուլերի եւ ամիս-ամսաթուերի զուգաւորութիւնը։ Իսկ Լուսնի փուլերի իմացութիւնը յոյժ կարեւոր էր Ջատիկի օրը որոշելու համար։

Ահա, Անդրէասի ցուցակն էլ պարունակել է 10 հատ 19երեակ եւ 10 տարի եւս՝ յաջորդ 19երեակից ($10 \times 19 + 10 = 200$): Նոր զատկացուցակ ստեղծելու խնդիրը ունէր երկու (մաթեմատիկօրէն) համարժէք լուծում. կարելի էր՝

ա. սպասել 9 տարի եւս, որ աւարտուէր Անդրէասի կիսատ թողած 19երեակը ու նոր 19երեակի սկզբով սկսել նոր տօնացոյցը,

բ. կարելի էր նաեւ Անդրէասի զատկացուցակի աւարտից անմիջապէս յետոյ սահմանել նոր 19երեակ եւ այդ նոր 19երեակի սկզբով էլ սկսել նոր զատկացուցակը:

Քանի որ 19երեակի սկիզբը զուտ պայմանական է, ապա, բնականաբար, այս երկու լուծումները աստղագիտական ու մաթեմատիկական առումով լրիւ համարժէք են: Սակայն աւանդոյթի պահպանման առումով, անշուշտ, նախապատուելի է սրանցից առաջինը: Այս է պատճառը, որ 9 տարի տոմարական խառնաշփոթ է տիրում քրիստոնեայ աշխարհում: Ինը տարի անց Աղեքսանդրիայում 36 տոմարագէտների ժողովը էաս Աղեքսանդրացու գլխաւորութեամբ ընդունում է նոր օրացոյց՝ 532ամեայ պարբերութեամբ: Սա համարւում է նշանակալի առաջընթաց: Բանն այն է, որ $532 = 19 \times 28$: Այսպիսի պարբերութեամբ պիտի կրկնուի Լուսնի փուլերի, ամիս-ամսաթուերի եւ շաբաթուայ օրերի զուգադրումը: Բնականաբար, այս նոյն պարբերութեամբ պիտի կրկնուեն նաեւ Զատիկն ու եկեղեցական բոլոր միւս տօները, քանի որ դրանք բոլորը հաշուարկւում են ամսաթուերի, Լուսնի փուլերի եւ շաբաթուայ օրերի հիման վրայ (19 տարի պարբերութեամբ կրկնւում է Լուսնի փուլերի եւ ամիս-ամսաթուերի զուգադրումը, 28 տարին մէկ էլ ամբողջութեամբ կրկնւում է ամսաթուերի եւ շաբաթուայ օրերի զուգադրումը): Հայկական տոմարում այս պարբերաշրջանը յայտնի է հիմնգիւրդիւրեակ, Շեակ, ՇԼԲ բոլորակ եւ այլ անուններով⁵: Ըստ մեզ հասած մատենագիր աղբիւրների Հայերը Աղեքսանդրիայի այս ժողովին չեն մասնակցել: Մեզ հասած բոլոր վկայութիւնների մէջ այս ժողովի մասնակիցների շարքում Հայաստանից ոչ ոք չի յիշատակւում: Եւ Աղեքսանդրիայի տոմարագէտների ժողովին Հայոց չմասնակցելու պատճառն այն էր, որ մինչ այդ արդէն Հայաստանում տոմարի հարցը կարգադրուած է եղել:

5 Արտաքին աղբիւրներում 532ամեայ պարբերաշրջանը յայտնի է Մեծ ինդիկտոն անունով, իսկ արեւմուտքում էլ այն երբեմն կոչւում է Վիկտորիան շրջան՝ Վիկտորիոս Ափուխամացու անունով, որ 457ին ներկայացրել է դա Հռոմում:

Իրօք, օրացուցային այս խառնաշփոթի հէնց սկզբում Հայաստանեայց Եկեղեցին, չսպասելով հարցի համընդհանուր լուծմանը, իր տոմարական հարցերը կարգադրում է սեփական միջոցներով: Յիշենք, որ այս շրջանում (Զ. Դարի կէսերին) արդէն սկսել էին ծաւալուել ու թափ առնել դաւանաբանական տարաձայնութիւններն ու վէճերը Քաղկեդոնի 451 թուականի ժողովի որոշումների շուրջ, եւ Հայաստանեայց Եկեղեցին աւելի ու աւելի էր հեռանում-անջատուում Բիւզանդականից: Զի բացառուում, որ ինքնուրոյն տոմար հիմնելն այս ժամանակ, եղել է նաեւ քաղաքական քայլ՝ Հայոց Եկեղեցու ինքնուրոյնութիւնը ամրակայելու ուղղութեամբ: Յայտնի է նաեւ, որ Հայաստանեայց Եկեղեցու այս քայլը բնաւ հաւանութեան չի արժանանում արեւմուտքում: Ամէն դէպքում, այդ ժամանակուայ Հայոցկաթողիկոս Մովսէս Եղիվարդեցու պատուէրով Գլխայ Սուրբ Կարապետ վանքի վանահայր Աթանաս Տարօնացին, լինելով տոմարական հաշուամենբրին քաջատեղեակ, կազմում է սեփական զատկացուցակ: Սա, փաստօրէն, առաջին հայկական ինքնուրոյն զատկացուցակն է, կազմուած քրիստոնէական տօնացոյցի կանոններին համապատասխան եւ հայկական աւանդական ամիս-ամսաթուերի կիրառութեամբ: Բնականաբար, այս զատկացուցակում տարիները պիտի ինչ որ կերպ համարակալուած լինէին: Ահա՛ Աթանասի կազմած հայկական զատկացուցակի տարիների հերթական համարների համակարգն էլ յետագայում դառնում է հայկական նոր տարեհաշիւը,

- 6 Այս մասին շատ կարճ նշում է Ամանիան. «Որպէս պատահաց յիսկբանն՝ եւ այսպէս կայ անշարժ, ոչ միայն հասարակդ, այլ ամենայն տօնք եւ եղանակք ազգաց իւրաքանչիւրոց: Բա՛ց ի հայոց: Զի զօրն յաւելեալ ի Դ. ամն՝ նոքա ի Ե. երեակն աւելին. եւ հայք առանձին նահանջ կարգեցին: Զոր ո՛չ գովեցինեհուհնք արուեստին, այլ սահմանեցին նոքա տոմար մերոյ ազգիս անշարժ, որպէս այլոց ազգաց»: ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ, Տիեզերագիտութիւն եւ տոմար, ամդ, գլ. ԶԲ, 89: Նոյնը կրկնում է եւ Սամուէլ Ամեցիւն. ԱՐԲԱՆԱՄԵԱՆ, Ա., Սամուէլ Ամեցու տոմարակամ եւ տիեզերագիտակամ աշխատութիւնը, ի էջմիածին 1952, Ա, 30-36, եւ Բ, 34-43: Այստեղ նշուած է նաեւ, որ Աթանասի տոմարը խոտան համարած այդ «ներհուհնք արուեստին» նաեւ Հայոց համար առանձին տոմար եմ սահմանել ըստիրեմց Յիշտ համարած կերպի: Բնականաբար, դա էլ Հայաստանում ընդունելութիւն չիունեցել: Մեզ հասած բոլոր աղբիւրները միաբերան վկայում են, որ Աթանասի տոմարը անխափան կիրառուել է Հայաստանում մինչեւ Ամանիայի բարեփոխումը եւ նաեւ դրանից յետոյ էլ երկար դարեր:

որ յետոյ յայտնի է դառնում «Հայոց թուական, Հայոց Մեծ թուական, Հայոց Բուն թուական» եւ այլ նման անուններով:

Անդրէասի ցուցակի վերջին Ձատիկը 552 թուականինն էր (Մարտի 31ին), Աթանասի ցուցակի առաջին Ձատիկն էլ դրա յաջորդն է՝ 553 թուականինը (Ապրիլի 20ին): Աթանասի ժամանակ հայկական աւանդական օրացոյցը տակաւին որեւէ փոփոխութեան ենթարկուած չէր եւ կիրառուում էր 365օրեայ հաստատուն տեւողութեամբ տարիներով (առանց նահանջի օրուայ) ու Նաւասարդի մէկ շարժական տարեմուտով: Հէնց այս օրացոյցն էլ Աթանաս Տարօնացին դնում է իր կազմած տօնացոյցի հիմքում:

Հայկական աւանդական օրացոյցը ստեղծուել էր քրիստոնէութիւնից շատ առաջ, բոլորովին այլրօնի պայմաններում եւ, բնականաբար, կոչուած էր բաւարարելու այդ կրօնի պահանջները, որին էլ նա ծառայել էր երկար դարերի ընթացքում: Քրիստոնէութիւնը, լինելով նոր կրօն, թէպէտ շատ հին արմատներով, անշուշտ, ունէր նաեւ նոր պահանջներ օրացոյցի նկատմամբ: Հարկաւ, այդ նոր պահանջները չէին կարող ներդաշնակել հայկական հնաւանդ օրացոյցի հնարաւորութիւններին:

Հայկական օրացոյցն իր աւանդական կառուցուածքով ունեցել է հետեւեալ տեսքը:

Տարին բաղկացած է եղել 12 ամիսներից, որոնցից իւրաքանչիւրն ունեցել է 30ական օր: Այս 12 ամիսներից յետոյ դրուել են եւս 5 յաւելեալ օրեր, որոնք չեն համարուել տարուայ մէջ: Միջնադարեան հայ տոմարագէտները դրանք համարել են «արարչութեան օրեր», որ նախորդել են մարդու արարմանը: $12 \times 30 + 5 = 365$ օր տեւողութեամբ տարեշրջանը շուրջ մէկ քառորդ օրով կարճ է արեւադարձային տարուց, որի ճշգրիտ տեւողութիւնը 365.2422 օր է: Հայկական օրացոյցում աւանդաբար նահանջի օր չի կիրառուել: Տեւողութիւնների այս տարբերութեան հետեւանքով 1506 արեւադարձային տարում հայկական շարժական տարեմուտը մէկ լրիւ պտոյտ պիտի գործէր արեւադարձային տարուայ բոլոր օրերով. $1506 \times 365.2422 = 1507 \times 365$:

Հայկական օրացոյցի այս իւրայատկութիւնը հապէս դժուարացնում էր այդ օրացոյցով քրիստոնէական տօնացոյց կազմելը: Սա է պատճառը, որ հայկական քրիստոնէական տօնացոյց կազմելը միշտ էլ կապուած է եղել հական բարդութիւնների հետ: Աթանասի ժամանակ (552 թուական) Նաւասարդի մէկը համապատասխանում էր Յուլեան օրացոյցի Յուլիսի 11ին, եւ Նաւասարդի մէկի՝ չորս տարին մէկ մի օրով փոփոխուելը բնաւ չէր

խանգարում տոմարական հաշվումներին, քանզի Զատիկը որոշելիս էականը դարնանամուտի օրն էր՝ Մարտի 20ը: Մարտի 20ից մինչեւ Յուլիսի 11ը կար 113 օր, այնպէս որ Աթանասի ժամանակ դեռ 452 տարի կար ($113 \times 4 = 452$), մինչեւ Նաւասարդի մէկը՝ չորս տարին մէկ օրյառաջանալով, հասնէր դարնանամուտի օրուան եւ խանգարէր տոմարական հաշվումներին: Ուստի, Աթանասը, չվախենալով որեւէ թիւրիմացութիւնից, կարող էր կազմել թէ՛ 95ամեայ, թէ՛ 200ամեայ, եւ թէ՛ այլ տեւողութեան զատկացուցակներ (միայն թէ 452 տարուց ոչաւելի տեւողութեամբ): Այսօր չգիտենք, թէ ստոյգ քանի տարի է ընդգրկել Աթանասի կազմած տօնացոյցը, գուցէ դա եղել է ընդամենը 95 տարուայ համար⁷, կամ՝ Անդրէասի նմանութեամբ՝ 200 տարուայ: Վստահ կարող ենք լինել միայն, որ այն չի գերազանցել 452 տարին:

Փաստօրէն, Հայոց (Մեծ) թուականը հիմնուել է որպէս շարժական տարեմուտով օրացոյց՝ Նաւասարդի մէկ տարեմուտով, որ մօտաւորապէս չորս տարում մի-մի օր տեղաշարժուել է տարուայ եղանակների (եւ Հռոմէական օրացոյցի ամսաթուերի) նըկատմամբ: Եւ այս կերպ հիմնուած տարեհաշուի սկիզբն էլ եղել է 552ի Յուլիսի 11 = Նաւասարդի 1ը: Այս օրացոյցով առաջին Զատիկը եղել է 553ի Ապրիլի 20ին, որ համարուել է Հայոց (Մեծ) թուականի առաջին տարուայ Զատիկը:

7 Եթէ Աթանասի գատկացուցակը եղած լինէր 95 տարուայ համար, ապա այն պիտի աւարտուած լինէր $551 + 95 = 646$ թուին: Այս պարագայում պիտի հարց առաջանար հէնցայդ ժամանակ նոր գատկացուցակ կազմելու: Իսկ դա էլ Ամանիայի՝ Տրապիզոնում ուսումնառութիւնն աւարտելուց յետոյ Հայաստան վերադառնալու ժամանակից (666 թուական) առաջ է 20 տարով: Մատենագրական որեւէ յիշատակութիւն Ամանիայից առաջ Հայոց տոմարի կարգադրութեան մասին մեզ չի հասել: Շատ գայթակղիչ կը լինէր համարել, որ Ամանիայի արած տոմարական կարգադրութիւնը եղած լինի հետեւանք հէնց այս իրողութեան եւ այդ կերպ էլ համարել, որ Աթանասի կազմածը եղել է 95ամեայ գատկացուցակ: Սակայն այսպիսի ընդունելութեան համար բաւարար փաստեր չունենք: Դեռ կան որոշ փաստեր էլ սրա դէմ: Ուստիկարելի է համարել, որ Աթանասի կազմած գատկացուցակը եղած պիտի լինի 95 տարուց աւելի: Եւ կամ, եթէ Աթանասի գատկացուցակը միայն 95 տարուայ համար է եղել, ապա հարկ է ընդունել, որ դրա աւարտից յետոյմինչեւ Ամանիայի արած օրացուցային կարգադրութիւնը Հայաստանում 20 տարի օգտագործուել են այլ օրացոյցներ: Այստեղ այս հարցին սրանից աւելի չենք անդրադառնալ, քանի որ սա առանձին լուրջ փնտրութեան նիւթ է:

Կարողենք ասել, որ Աթանաս Տարօնացին առաջինն էր, որ հայկական աւանդական շարժական օրացոյցի հիման վրայ կազմեց քրիստոնէական տօնացոյց (առաջին ինքնուրոյն հայկական քրիստոնէական տօնացոյցը), որի տարիների հաշիւն էլ յետագայում դարձաւ Հայոց Մեծ Թուական կոչուող տարեհաշիւը (552ի Յուլիսի 11ից սկիզբառնող):

Քրիստոնէական տօնացոյցը հիմնուած է ե՛լ լուսնա-արեգակնային օրացոյցի վրայ, որ գալիս էր հրէական տոմարական աւանդոյթից, ե՛ւ էլ արեգակնային օրացոյցի վրայ, որն էլ գալիս էր հռոմէական տոմարից: Հայկական օրացոյցը ներդաշնակ չէր սրանցից եւ ոչ մէկին: Եւ, որպէս բնական հետեւանք օրացուցային հնարաւորութիւնների ու պահանջների այս տարաձայնութեան, պիտի շատ մեծ դժուարութիւններ առաջանային հայկական օրացոյցով քրիստոնէական տօնացոյց կազմելիս: Այս դժուարութիւնների մի մասը, որ կապուած էր հաշուամիջոցների խրթինութեան հետ, Աթանասը յաղթահարում է իր տօնացոյցը կազմելիս: Սակայն կային եւ դժուարութիւններ, որ շատ աւելի սկզբունքային բնոյթի էին եւ Աթանասի ժամանակ դեռեւս խոչընդոտ չէին, ուստի եւ նա փորձ էլ չի արել դրանք յաղթահարելու:

Այս դժուարութիւններն էին, որ Աթանասից մէկ դար անց Հայաստանեայց Եկեղեցուն ստիպեցին նորից անդրադառնալ տոմարին: Այս անգամ Հայոց Կաթողիկոս Անաստաս Ակոռեցին է գբաղում տոմարի հարցով⁸: Ընդհանրապէս, Անաստաս Ակոռեցուն նախաձեռնած գործը շատ աւելի ընդգրկուն է եղել, քան միայն

8 Անաստաս Ակոռեցի Կաթողիկոսի կողմից տոմարի խնդիրների անդրադառնալը ունի նաեւ երկու այլ շատ էական պատճառ: Բանն այն է, որ 665 թուականն եղել է ծնագատիկի տարի: Սա այն եզակի դէպքերից է, երբ 532 տարիների ընթացքում չորս անգամ իրարից մէկ շաբաթով տարբեր են լինում հայկական եւ արեւմտեան տօնացոյցներով հաշուարկուած գատիկները: Հայաստանում համարել են, որ այդ տարիներին արեւմտեան տօնացոյցով հաշուարկուած Զատիկը համընկնում է Հրէից Պասեֆի հետ եւ, ըստ այդմ, ընկնում է Նիկիայի ժողովի 318 հայրերի նշանակած տակ: Այս պատճառով էլ դա համարել են ծուռ Զատիկ: Միջնադարեան իրականութեան մէջ ծնագատիկը հասարակութեան մէջ մեծ յուզումների պատճառ է եղել: Բնական է, որ դա առիթ տար տոմարական հարցերին անդրադառնալու: Երկրորդ պատճառն էլ այն է, որքէնց այդ ժամանակ՝ 666 թուականին դրսում իրուսումնաւորութեան յետոյ Հայաստան է վերադառնում Ամանիա Շիրակունին: Մինչ նրա գալը Հայաստանում այդ կարգի տոմարագետ-մասնագետ պարզապէս չի եղել:

հայկական օրացոյցը կարգադրելը: Հարկ է ի մտի ունենալ, որ այդ ժամանակ Հայաստանում բարձրագոյն դպրոցի ուսումնական ձեռնարկները սահմանափակուած են եղել միայն եռեակ գիտութիւններով (քերթողական արուեստ, ճարտասանութիւն եւ տրամաբանութիւն): Քառեակ գիտութիւնները (համարողութեան արուեստ, երկրաչափութիւն, երաժշտութիւն եւ աստղագիտութիւն) ընդգրկուած չեն եղել բարձրագոյն դպրոցի դասագրքերի մէջ, բնականաբար, նաեւ չեն դասաւանդուել: Օգտուելով այն հանգամանքից, որ Հայաստանում արդէն կար Անանիայի պէս հմուտ գիտնական (Անանիան⁹, ինչպէս նշում է իր յիշատակարանում, Տրապիզոնում իր ուսումն աւարտելով՝ Հայաստան էր վերադարձել 666 թուականին), Անաստաս Կաթողիկոսը նրան պատուիրում է ստեղծել հայկական բարձրագոյն դպրոցի համար նախատեսուած նոր ձեռնարկ՝ իր ժամանակի ամբողջ ուսումնական-գիտական ծրագրի ընդգրկումով:

Անանիան կատարում է Կաթողիկոսի յանձնարարութիւնը: Սակայն, ինչպէս նշում են մատենագիր աղբիւրները, Անաստաս Կաթողիկոսը մահանում է միայն վեց տարի գահակալելով եւ չի հասցնում եպիսկոպոսական ժողովով հաստատել իր պատուէրով ստեղծուած նոր ձեռնարկը: Իսկ Կաթողիկոսական աթոռին նրան յաջորդած հովուապետները լրիւ մի կողմ են թողնում այդ գործը: Անանիայի այս աշխատութիւնը, որ կոչուել է «Քննիկոն», յոյժ բարձր է գնահատուել յետագայի հեղինակների կողմից: Թէպէտ ինչ-ինչ պատճառներով Անանիայի Քննիկոնը չօրջ չորս հարիւր տարի մնացել է առանց պատշաճ կիրառութեան, այդուհանդերձ տասնմէկերորդ դարում Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ջանքով եւ Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի աջակցութեամբ Անանիայի այս եզակի ձեռնարկը բազմացւում եւ դրւում է կիրառութեան մէջ¹⁰: Այստեղ եռեակ եւ քառեակ գիտութիւններից զատ ընդգրկուած են եղել նաեւ որոշ կիրառական գիտութիւններ եւ դրանց շարքում առաջինը եղել է տոմարը:

9 Անանիան հայ մատենագրութեան մէջ յայտնի է Անանիա Ծիրակացի (Ծիրակաւանցի), Անանիա Ծիրակունի, Անանիա Անցի, Մեծն Անանիա, Անանիա Համարող եւ այլ յորջորջումներով: Որդին է Յովհաննէս Ծիրակունու: Հին հեղինակների (Գրիգոր Մագիստրոսի, Յովհաննէս Սարկաւազի, Վարդան Արեւելցու եւ այլոց) երկերում յիշատակում է հիմնականում իր տոհմանունով՝ Անանիա Ծիրակունի ձեւով:

10 ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա., Գրիգոր Մագիստրոսը եւ Անանիա Ծիրակացու «Քննիկոնը», Ի Բանբեր Մատենադարանի, քիւ 16, Երեւան 1994, 16–30:

Անանիայի Քննիկոնին անդրադարձած բոլոր հեղինակները միաձայն պնդում են, որ այստեղ մանրամասն ներկայացուած է եղել նաեւ տոմարը, ընդ որում՝ այնպիսի լրիւութեամբ, որ դրանից յետոյ վերանում է այլ ազգերի օրացոյցներից օգտուելու անհրաժեշտութիւնը¹¹:

Յաւօք, Անանիա Շիրակունու այս կոթողային երկը իր նախնական ամբողջական վիճակով մեզ չի հասել: Հայ բանասիրական միտքը ահա արդէն մօտ երկու դար է, ինչ հետազօտում է Մեծն Անանիայի թողած գիտական ժառանգութիւնը եւ ի մասնաւորի՝ նրա Քննիկոնն ու վերջինիս մասը հանդիսացող Տոմարը: Այսօր, շնորհիւ նախորդ սերնդի գիտնականների պրպրտումների, բաւական որոշակի պատկերացում ունենք Անանիայի այս երկի ընդհանուր կառուցուածքի մասին: Գիտենք, թէ ինչ մասեր է պարունակել Քննիկոնը եւ ինչ հերթականութեամբ են դրանք դասաւորուած եղել¹²:

Առանձին խնդիր է նաեւ Քննիկոնի մէջ Անանիայի Տոմարի կառուցուածքը: Անանիայի Տոմարի հիմնական բաղադրիչները եւս այսօր յայտնի են մեզ: Այդ բաղադրիչների բովանդակութեամբ եւ Անանիայի տարբեր երկերում առկայ զանազան վկայութիւնների միջոցով հնարաւոր է նաեւ վերականգնել Անանիայի Տոմարի սկզբունքային կառուցուածքը, դրա տարբեր մասերի փոխադարձ դասաւորութիւնն ու դերը:

Արդ, համառօտ ներկայացնենք, թէ ինչ է մեզ այսօր յայտնի Անանիայի Տոմարի կառուցուածքի՝ դրա բաղադրիչների եւ վերջիններիս դասաւորութեան մասին:

Նախ եւ առաջ նկատենք, որ Տոմարի կառուցուածքը պիտի պայմանաւորուած լինի այն խնդիրներով, որոնց լուծման համար ստեղծուել է այդ երկը: Ուստի, հարկ է նախ նայել, թէ ի՞նչ խնդիրներ լուծելու նպատակով է ստեղծուել այս Տոմարը,

11 Այս մասին ի թիւս այլոց տեղեկացմում է եւ Յովհաննէս Դրասխանակերտցին. «...առ ինքն զԱնանիա Անեցի կոչեալ՝ որ բանիբուն այնմ արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զխնդրելին իւր: Իսկ նորա ջան 'ի վերայ եղեալ եւ ըստ բոլոր ազգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ զկարգ Հայկական տոմարի. Զի բարեձեւագունից ոմանց եւ զմերս կշռադատեալ՝ մի՛ կարօտասցուք զալ 'ի զուգաւորութիւն Հռովմայեցոց», ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏԻ, Պատմութիւն Հայոց, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան 1996, 94-96:

12 ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա., անդ:

ի՞նչ պահանջների պիտի այն բաւարարէր: Տոմարի հիմնական նպատակը եղել է ֆրիստոմէական եկեղեցու տօների օրերը որոշելը եւ բոլոր ֆրիստոմէայ ազգերի տօնացոյցների գուգահեռութիւնն ու ներդաշնակութիւնը ապահովելը:

Այս խնդիրներից առաջինը բխում է նրանից, որ օրացոյցը, ընդհանրապէս, մասն է կրօնի, այն ստեղծուում է միշտ մի որոշակի կրօնի կողմից՝ այդ կրօնի պահանջները բաւարարելու համար¹³: Այսինքն՝ օրացոյցը ստեղծուում է նախ եւ առաջ հէնց կրօնական տօների եւ այլ գործողութիւնների ժամանակները որոշելու համար:

Ինչ վերաբերում է այս պահանջներից երկրորդին՝ սա էլ գալիս է առաքելական կանոններից, որոնց մէջ յստակ պահանջ էր դրուած, որ բոլոր քրիստոնեայ ազգերը Զատիկը (եւ այլ տօները եւս) տօնեն միաժամանակ¹⁴: Ժամանակին (353 թուական) այս կարգի մասնաւոր խնդիր լուծել էր Անդրէաս Բիւզանդացին, ստեղծելով ութ ֆրիստոմէայ ազգերի համար կիրառելի 200ամեայ զատկացուցակ՝ կից բացատրական մասով¹⁵:

Անդրէասից շուրջ երեք դար անց Անանիան ստեղծում է տոմարական մի երկ, որի մէջ իրար զուգահեռ ներկայացւում են արդէն ոչ թէ ութ, այլ 15 ազգերի օրացոյցները: Ընդ որում, Անդրէասի տոմարի մէջ, բնականաբար, տեղ չի ունեցել հայկական օրացոյցը, քանի որ անհնար պիտի լինէր շարժական տարեմուտով օրացոյցը ներկայացնել անշարժ տարեմուտով օրացոյցներին զուգահեռ: Սրան հակառակ, Անանիայի Տոմարում լիարժէք կերպով ներկայացուած է եղել նաեւ (նախ եւ առաջ) հայկական օրացոյցը: Ի՞նչ կերպ է Անանիան լուծել այս խնդիրը:

Անանիայի Տոմարը կառուցուած է երկու հիմնական մեծ աղիւսակների վրայ: Սրանք են «Խառնախորանը» եւ «ՇԼԲ բոլորակը»:

Խառնախորանը տարուայ 12 ամիսները ներկայացնող 12 մեծադիր աղիւսակների, մի քանի օժանդակ փոքր աղիւսակների

13 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 1997, 9–16. Նաեւ ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Դասընթաց տոմարագիտութեամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2013, 10–28 (տպագրութեամբ ընթացքի մէջ է):

14 Կանոնգիրք Հայոց, ՅԱԿՈԲԵԱՆ Վ. (աշխատ.), հտ. Ա., ՀՍՍՌ-ԳԱ հրատ., Երևան 1964, 32:

15 Ամանիան այս մասին ակնարկում է. «Վասն զի աստ եղեւ լրումն .Մ. ամի կարգացն Անդրէասայ, Ը. ազգաց». ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅԻ, Տիեզերագիտութիւն եւ տոմար, 86–87: Նաեւ՝ ԱՂԱՅԵԱՆ, Է., անդ.:

եւ կից բացատրական շարադրանքների ամբողջութիւնն է¹⁶: 12 հիմնական աղիւսակները կառուցուած են Հռոմէական օրացոյցի հիման վրայ եւ դրանցից իւրաքանչիւրը ներկայացնում է Հռոմէական օրացոյցի մէկ ամիսը: Սկսւում է Յունուարից եւ աւարտւում է դեկտեմբերով: Իւրաքանչիւր ամսուայ աղիւսակում ներկայացուած են ամսուայ բոլոր օրերը մէկ առ մէկ եւ ամէն օրուայ համար տրուած են համապատասխան ամսաթուերը Հռոմէականից զատ՝ նաեւ 13 ազգերի օրացոյցներով: Այսինքն՝ Հռոմէականի հետ միասին ստացւում է 14 ազգերի օրացոյցների զուգահեռ ներկայացում: Խառնախորանում ներկայացուած 14 ազգերի օրացոյցներն են Հռոմէականը, Եբրայականը, Արաբականը, Մակեդոնականը, Ասորականը, Յունականը, Եգիպտականը, Եթովպականը, Աթենականը, Բիւթանականը, Կապադովկիականը, Վրացականը, Աղուանականը եւ Պարսից՝ օրացոյցը: Հայկական օրացոյցը Անանիայի Խառնախորանի մէջ ներկայացուած չի եղել:

Խառնախորանում վերը նշուած 14 ազգերից իւրաքանչիւրի օրացոյցի համար տրուած են եղել բոլոր հիմնական (անշարժ) տօների օրերը, ամսամուտերը, տարեմուտերը, արեւադարձերի եւ գիշերահաւասարների օրերը: Հռոմէական օրացոյցն էլ այստեղ ներկայացուած է եղել իր աւանդական կառուցուածքով՝ ամսուայ մէջ օրերի ետընթաց հաշուարկի, ամսամտի (կալենդայի), նոնուսի եւ իդուսի կիրառութեամբ: Եղել է նաեւ կից բացատրական շարադրանք՝ Հռոմէական օրացոյցի այս անսովոր կառուցուածքը հասկանալու եւ կիրառելու համար:

Խառնախորանում եղել են նաեւ առանձին սիւնակներ, որոնց մէջ տրուած թուերով հնարաւոր է եղել գտնել կամայական տարուայ կամայական օրուայ առւեր պատկերը (շաբաթուայ ինչ օր լինելը) եւ Լուսնի փուլը՝ օգտագործելով տարուայ եօթներեակը եւ վերադիրը¹⁸: Եղել է Խառնախորանի տարբեր սիւնակ-

16 Անանիայի Տոմարի այս քաղադրիչի մասին մանրամասն տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., *Անանիա Շիրակացու «Խառնախորանը»*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 1998:

17 Այստեղ տարակուսելի կարող է թուալ Արարների, Երբայեցիների եւ Պարսից յիշատակումը բրիստոնեայ ազգերի շարքում: Բանմայմէ, որ Եօթներորդ դարում այս մշտալ անգերի մէջ եղել են քարձր կազմակերպուած հոծ բրիստոնեայ համայնքներ, որոնց համար էլ կազմուած են եղել համապատասխան օրացոյցներ:

18 Եօթներեակը եւ վերադիրը միջնադարեան տոմարներում լայնօրէն կիրառուող օրացուցային մակաչափերեն: Եօթներեակը տարին բնութագրող

ների թուերի կիրառութեան կերպը ներկայացնող յատուկ բացատրական շարադրանք¹⁹: Այս շարադրանքում եղել են բոլոր սիւնակների պարունակած մեծութիւնների կիրառման բացատրութիւնները:

Այս նպատակների համար կիրառուել են նաեւ խառնախորանի օժանդակ աղիւսակները եւ դրանց բացատրութիւնները:

Խառնախորանը պարունակել է նաեւ տեղեկութիւններ (առանձին սիւնակներով) ցերեկուայ եւ գիշերուայ տեւողութիւնների, Արեգակի դիրքի եւ ընթացքի մասին՝ տարուայ իւրաքանչիւր օրուայ համար:

Այսինքն, ի դէմս Անանիայի կազմած խառնախորանի ունենք մի կողմ օրացուցային կառոյց, որի միջոցով հնարաւոր է եղել դիւրութեամբ անցում կատարել նշեալ 14 ազգերի օրացոյցների միջեւ եւ գտնել կամայական օրացուցային խնդրի լուծումը այդ օրացոյցների համար:

Արդ գանք Անանիայի կազմած ՇԼԲ բոլորակին: Սա 532 տարիներ ընդգրկող մի շատ ծաւալուն աղիւսակ է, որի մէջ 532 տարիների համար զուգահեռաբար տրուած են հայկական եւ հռոմէական օրացոյցները: Աղիւսակները բաւական ծաւալուն են, այնպէս որ հայկական եւ հռոմէական օրացոյցներից իւրաքանչիւրը պարունակել է 14ական սիւնակ: Այս սիւնակներում ամէն մի տարուայ համար տրուած են եղել տարուայ հերթական համարը, վերադիրը, եօթներեակը, նահանջը, Յայտնութեան տօնի ամիս-ամսաթիւը, աւուր պատկերը, Բուն Բարեկենդանի, Զատիկուայ ամիս-ամսաթիւը, գարնանամուտի ամիս-ամսաթիւը եւ ժամը եւ այլն:

մեծութիւն է, որ ընդունում է մէկից եօթն արժէքներ եւ (Հիմ տմարի համար) թուապէս հաւասար է տարեմուտի միտրոյ օրուայ աւուր պատկերին (կիրակի - 1, երկուշաբթի - 2, երեքշաբթի - 3, ...ուրբաթ - 6, շաբաթ - 7): Կիրառում է տարուայ կամայական օրուայ աւուր պատկերը գտնելու համար: Վերադիրն էլ ընդունում է 1-30 արժէքներ եւ թուապէս հաւասար է տարեմուտի միտրոյ օրուայ Լուսնի փուլին: Կիրառում է տարուայ կամայական օրուայ Լուսնի փուլը գտնելու համար:

19. ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., *Անանիայի Տոմարի մի մորայայտ բաղադրիչի մասին*, ի «Բազմավէպ» 2011, 1-2, 181-215: Մեզ է հասել այս բացատրական շարադրանքի խմբագրուած, աղաւաղուած տարբերակը առանց հեղինակային նշման: Սակայն դրա մանրամասն վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ դա մաթապէս եղել է Անանիայի խառնախորանի մասը:

Այսադիւսականները սկսուել են Հայոց 29 թուականով եւ աւարտուել են Հայոց 560 թուականով, որոնց համապատասխանում են Փրկչական 581–1112 թուականները: Այս միջակայքի իւրաքանչիւր տարուայ համար տրուած են եղել վերը նշուած բոլոր տոմարական տուեալները թէ՛ Հայկական (չարժական), եւ թէ՛ Հռոմէական օրացոյցներով:

Փաստօրէն, ստացւում է, որ Անանիայի ՇԼԲ ադիւսականների միջոցով հնարաւոր է եղել նշեալ միջակայքի կամայական տարուայ համար Հայկական օրացոյցից անցնել Հռոմէականին եւ հակառակը՝ Հռոմէականից Հայկականին: Միւս կողմից էլ, ինչպէս վերը տեսանք, Խառնախորանի միջոցով էլ հնարաւոր էր Հռոմէական օրացոյցից անցնել 13 տարբեր քրիստոնեայ ազգերից իւրաքանչիւրի օրացոյցին: Ընդորո՞ւմ, այս անցումները լիովին չըջելի են. հնարաւոր է կատարել անցումները նաեւ հակառակ ուղղութեամբ՝ կամայական ազգի օրացոյցից Խառնախորանով անցնել Հռոմէականին: Այսինքն, Խառնախորանի եւ ՇԼԲ-ի համատեղ կիրառումով հնարաւոր է Հայկական օրացոյցից (Հռոմէականի միջոցով) անցնել կամայական այլ օրացոյցի եւ հակառակը՝ կամայական ազգի օրացոյցից անցնել Հայկականին: Ստացւում է, որ Անանիայի Տոմարի այս երկու հիմնական ադիւսականների՝ Խառնախորանի եւ ՇԼԲ ադիւսակի միջոցով միարժէք անցում է ապահովւում բոլոր 15 քրիստոնեայ ազգերի օրացոյցների միջեւ: Եւ այս կերպ Հայկական օրացոյցը ազատօրէն կապւում է իր ժամանակի ամբողջ քրիստոնեայ աշխարհի օրացոյցներին: Այսինքն, իրականացւում է առաքելական կանոնները հիմնական օրացուցային պահանջը՝ բոլոր քրիստոնեայ ազգերի տօների համաժամանակուլութիւնը:

Օրացուցային այս անցումները առաւել լիարժէք դարձնելու համար Անանիան իր Տոմարի մէջ գետեղել է նաեւ տարբեր ազգերի օրացոյցների համար բացատրական չարադրանքներ եւ տարբեր օժանդակ ադիւսականներ: Այս չարադրանքները, որ կոչուել են «տումարական պատմեմներ», կոչուած են եղել բացատրելու տուեալ ազգի օրացոյցի առանձնայատկութիւնները եւ կիրառման կերպը: Այսօր ստոյգ չգիտենք, արդե՞օք Անանիայի Տոմարում եղել են բոլոր 15 ազգերի տոմարների պատճենները, թէ՞ միայն որոշ ազգերի օրացոյցներին է եղել: Ստոյգ գիտենք, որ վստահաբար եղել են Հայոց, Հռոմէացոց եւ Եբրայեցոց օրացոյցների ընդարձակ պատճենները եւ համառօտ՝ Ասորոց, Եգիպտացոց ու Յունաց օրացոյցների պատճենները: Ամենամեծ ման-

րամասնութեամբ եղել է Հայոց տոմարի պատճէնը: Այստեղ ամէն ինչից զատ տրուած են եղել Հայոց տոմարի թէ՛ ամիսների, թէ՛ ամսուայ օրերի եւ թէ՛ օրուայ ժամերի անունները: Անանիայի աւանդած այս անունները անգնահատելի տեղեկութիւններ են պարունակում հայկական օրացոյցի հնագոյն ժամանակների վիճակի ու կրած փոփոխութիւնների մասին: Անանիայի Տոմարում եղել են նաեւ ընդգրկուած բոլոր ազգերի օրացոյցների ամիսների ցուցակները: Սրանք եւս թանկարժէք տեղեկոյթ են պարունակում վաղուց կորած, կիրառութիւնից դուրս եկած օրացոյցների, եւ լեզուական իրողութիւնների մասին: Օրինակ, սա միակ աղբիւրն է, ուր տրուած են Աղղուանական օրացոյցի բոլոր ամիսների անունները:

Առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ Անանիայի Տոմարի մէջ տրուած օժանդակ աղիւսակները: Այսօր ստոյգ չգիտենք դրանց ամբողջական կազմը: Սակայն որոշ բան արդէն իսկ յայտնի է: Գիտենք, օրինակ, որ այստեղ եղել է Հայոց վերադիրների մանրամասն աղիւսակ, ուր 532 տարիների համար տրուած են եղել բոլոր տարիների հայկական վերադիրները²⁰: Բանն այն է, որ Հայկական օրացոյցը շարժական ամսաթուեր եւ շարժական տարեմուտ ունենալու հետեւանքով հապէս դժուարանում էր տարուայ վերադիրը գտնելը: Եւ, թէպէտ կան յատուկ կանոններ՝ այդ վերադիրները գոտ հաշուարկային եղանակով գտնելու համար, այդուհանդերձ Անանիան իր Տոմարի մէջ տեղադրել է նաեւ հայկական վերադիրների աղիւսակ հէնց այնքան տեւողութեան համար, որքանի համար որ տրուած է ՇԼԲ բոլորակը:

Անանիայի տոմարի բաղադրիչ մասերից յատուկ կարեւորութիւն ունեն նրա երկու տեսական-դաւանաբանական շարադրանքները: Սրանք ներկայումս յայտնի են «Յայտնութեան մատ» եւ «Ձատկի մատ» անուններով²¹: Անշուշտ, այս յորջորջումները պայմանական են, տրուած են նոր շրջանի հետազոտողների կողմից:

Ընդհանրապէս, վերջին հետազոտութիւնները ցոյց են տուել, որ այս երկու ճառերը նախապէս եղել են մէկ միասնական շարադրանքի մասեր: Այսինքն, եղել է մէկ ծաւալուն շարադրանք (ճառ) Հայոց Եկեղեցու տօների մասին, որի մէջ առանձին հա-

20 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Անանիա Շիրակումու՝ Հայոց վերադիրների աղիւսակը, ի էջմիածին 1997, Ը-Թ, 94-103:

21 ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅԻ, Համարողի մատենագրութիւնը, 283-299:

տուածներ վերաբերել են Յայտնութեան եւ Զատկի տօներին²²։ Այսօր տակաւին դժուար է միանշանակ ասել, արդեօ՞ք միայն այս երկու (Յայտնութեան եւ Զատկի) տօներին վերաբերող հատուածներ են եղել Անանիայի գրած նախնական մեծ բացատրականի (ճառի) մէջ։ Անանիայի այս ճառերով տեսականօրէն հիմնաւորուել են Հայոց Եկեղեցու տօնացոյցի այն իրողութիւնները, որոնք տարբեր են եղել միւս քրիստոնեաների տօնացոյցների համապատասխան իրողութիւններից։ Ըստ այսմ շատ սպասելի է, որ Անանիան այս նոյն գրութեան մէջ տար նաեւ Առաջաւորաց տօնի (Առաջաւորաց պահքի) տեսական հիմնաւորումը եւս, քանի որ, ինչպէս գիտենք, այս տօնը եւս կրօնա-ծիսական այն հիմնական իրողութիւններից է, որոնցով Հայ Առաքելական Եկեղեցին հապէս տարբերուում է մնացեալ քրիստոնեայ եկեղեցիներից։ Մեզ են հասել միջնադարում թէ՛ հայադաւան, եւ թէ՛ այլադաւան քրիստոնեաների կողմից շարադրուած բազմաթիւ գրութիւններ, որոնցում պաշտպանուած-հիմնաւորում է, եւ կամ խիստ հանդիմանում է այս տօնը, որակելով այն տարբեր անվայել յորջորջումներով։ Բնականաբար, այս տօնի հետ կապուած տարակարծութիւնները ծագած պիտի լինեն ոչ թէ Անանիայից յետոյ, այլ պիտի եղած լինեն նաեւ նրա ժամանակ եւ, գուցէ, նաեւ նրանից առաջ, զի այս տօնը, ինչպէս գիտենք սահմանուել է տակաւին Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմից։

Այս ճառերի վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ Քննիկոնի շարադրման ընթացքում նամակագրութիւն է եղել Անաստաս Կաթողիկոսի եւ Անանիայի միջեւ, եւ Անանիան իր այս տեսական շարադրանքը յօրինել եւ Քննիկոնի տոմարական մասում գետեղել է Կաթողիկոսի պատուէրով։ Իր տեսական կրօնա-տոմարական շարադրանքը (Յայտնութեան եւ Զատկի ճառերը պարունակող նախնական գործը) Անանիան գրել է ի պատասխան Կաթողիկոսի կողմից իրեն ուղղուած դաւանաբանական եւ տօնագիտական հարցումներին²³։

Յայտնութեան ճառի մէջ Անանիան տեսականօրէն փայլուն հիմնաւորել է Աստուածայայտնութեան տօնը Յունուարի 6ին նշելը, որով եւ հիմնաւորուել է այդ տօնը Դեկտեմբերի 25ին նշ-

22 ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա., *Ամանիա-Շիրակացու «Քննիկոնը»,* ի «Լրաբեր հասարակական գիտութիւնների», Երեւան 1974, թիւ 8, 71-81։ Այս մասին տե՛ս նաեւ՝ *Մատենագիտութեան եւ հաւատոյ Դաթիւ Բախմանյի, ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա. (աշխատ.), «Նաիրի»* հրատ., Երեւան 1997, 15-16։

23 Անդ։

չելու սխալ լինելը: Ընդ որում, Անանիան Յունուարի 6ը հիմնաւորել է ոչ թէ Առաքելական կանոնների վկայակոչումով (Առաքելական կանոնների հայերէն օրինակի մէջ իրօք կայ Յայտնութեան տօնը Յունուարի 6ին տօնելու հրահանգ²⁴), այլ կատարել է օրացուցային մանրակրկիտ հաշուարկներ՝ հիմք ընդունելով աւետարանական տուեալները եւ Հրէական օրացոյցի իմացութիւնը: Այդ հաշուարկների հիման վրայ Անանիան ցոյց է տուել, որ Ս. Կոյսի աւետումը պիտի եղած լինի Ապրիլի 6ին²⁵, եւ ըստ այդմ էլ՝ Յիսուսի ծնունդը պիտի եղած լինի Յունուարի 6ին:

Զատիկի ճառի մէջ էլ Անանիան ցոյց է տուել, թէ ի՞նչ կերպ է ծագել ծռագատիկի խնդիրը եւ հիմնաւորել է Հայաստանեայց Եկեղեցու տօնացոյցը ու ցոյց է տուել արեւմտեան եկեղեցիների ընդունած տօնացոյցի սխալ լինելը նաեւ Զատիկը որոշելու խնդրում:

Փաստօրէն, այս երկու գրուածքներն էլ Հայոց Եկեղեցու դաւանաբանութեան գործնական-կիրառական լրացումներն են, յստակ հակաքաղկեդոնական բնոյթի են եւ չարադրուել են ի պաշտպանութիւն Հայ Եկեղեցու դաւանաբանութեան (մասնաւորապէս՝ դրա տոմարական մասի):

Ի նկատի ունենալով, որ այս ամէնը գրուել է 665 թուականի ծռագատիկից անմիջապէս յետոյ (Քննիկոնը կարող էր գրուած լինել 666-667 թուերին) եւ գործի պատուիրատուն էլ եղել է Հայոց Կաթողիկոսը, եւ Անանիան այս կրօնա-տոմարական տեսական շարադրանքը գրել եւ իր Տոմարի մէջ դրել է հէնց Կաթողիկոսի անմիջական յանձնարարութեամբ ի հիմնաւորումն Հայոց Եկեղեցու տօնացոյցի սկզբունքային դրոյթների, կարելի է եզրակացնել, որ Անաստաս Կաթողիկոսն է եղել Անանիայի Տոմարի այս հատուածի գաղափարախօսը: Այսինքն, Անաստաս Կաթողիկոսը Անանիայի օգնութեամբ փորձ է արել գիտական-տոմարական միջոցներով եւս հիմնաւորել, ամրակայել Հայ Եկեղեցու դաւանաբանական հիմքերը:

24 Կամոմագիրք Հայոց, 32:

25 Ներկայումս Աւետում տօնը նշում է Ապրիլի 7ին: Թէ ինչո՞ւ է Ապրիլի 6ը փոխուել Ապրիլի 7ի, դժուար է միամշակ ասել: Յայտնի է, որ արդէն Յովհաննէս Սարկաւագի տոմարական գործերում այդ փոփոխութիւնը առկայ է: Այսինքն, դա պիտի եղած լինի Ամամիայից միմչեւ Սարկաւագ ընկած ժամանակամիջոցում:

Ի մի բերելով մեր ամբողջ իմացածը Անանիայի Տոմարի մասին, տեսնում ենք, որ սա եղել է մի կուռ եւ համապարփակ ամբողջական օրացուցային կառույց: Նախ եղել է Հայաստանեայց Եկեղեցու տօների տեսական-տոմարական բացատրութիւնը, հիմնաւորումը: Սրան յաջորդել է Տոմարի կիրառական-գործնական մասը, որի միջոցով հնարաւոր պիտի լինէր լուծել կամայական օրացուցային խնդիր հայկական եւ մնացեալ 14 քրիստոնեայ ազգերի օրացոյցների սահմաններում: Սրանից զատ, հնարաւոր է եղել ստանալ նաեւ անհրաժեշտ աստղագիտական տեղեկութիւններ Լուսնի եւ Արեգակի դիրքի, շարժումների եւ ընթացքի մասին: Այս ամէնին զուգահեռ՝ Անանիայի Տոմարը պարունակել է նաեւ առաւելագոյնս լրիւ տեղեկութիւններ նշեալ ազգերի օրացոյցների մասին: Ընդ որում, այս տեղեկութիւնների մի մասի համար ներկայումս միակ մատչելի աղբիւրը հէնց Անանիա Շիրակունու Տոմարն է:

Իր ամբողջականութեամբ, դրուած խնդրի ընդգրկունութեամբ եւ դրա լուծման լրիւութեամբ Անանիայի Տոմարը աննախադէպ երեւոյթ է իր ժամանակից մեզ յայտնի օրացուցային իրականութեան մէջ: Եւ այսօր էլ այն չի կորցրել իր կարեւորութիւնը ոչ միայն իբրեւ աղբիւրագիտական յուշարձան, իբրեւ միջնադարեան գիտութեան եզակի յուշարձան, այլ նաեւ իբրեւ փայլուն նմոյշ՝ գիտական խիզախ խնդիր դնելու եւ դրուած խնդիրը սրամիտ կերպով ամբողջապէս լուծելու:

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

Summary

THE CONSTRUCTION OF "TOMAR" (THE CALENDAR) OF ANANIA SHIRAKOUNI

GRIGOR BROUTIAN

In 666 – 667 A.D. by the order of Armenian Catholicos Anastas Akorretsi the famous scientist of the time Anania Shirakouni created a new textbook (called Qnnikon) for the Armenian higher schools (universities) including all the seven disciplines of the time (trivium and quadrivum). The calendar was also included in this textbook and was called Tomar-The Calendar. Anania's Tomar (The Calendar) consisted from theoretical and practical parts. In the first – theoretical part he substantiated the positions of the main feasts of Armenian Apostolic Church. Particularly he theoretically proved the truthfulness of the positions of the days of Nativity and Easter used by Armenian Church. The applied part of Anania's Calendar consists of two main large tables – The Kharnakhoran and the 532-year tables. The Kharnakhoran was a set of 12 large tables, each on two pages, representing 12 months of Roman calendar. These tables were created and used to synchronize and parallel represent the calendars of 14 Christian nations (Romans, Greeks, Syrians, Hebrews, Arabs, Macedonians, Egyptians, Ethiopians, Athenians, Bithynians, Cappadocians, Georgians, Albanians (this refers to the Caucasian Albania), and Persians). The 532-year tables were created to give all the major church feasts and other important calendar data for 532 years from 581 to 1113 AD. In these tables all the data was given parallel both in terms of Armenian and Roman calendars. So, these tables made it possible to pass from Armenian calendar to the Roman calendar and vice versa. Thus, by means of these two main tables (the Kharnakhoran and the 532-year tables) it was possible to synchronize Armenian calendar with the calendars of all Christian nations that was the demand of the apostolic laws.